Ավետիք Իսահակյան

Սև - մութ ամպեր ճակտիդ դիզված

Սև - մութ ամպեր ճակտիդ դիզված,
Դուման հազար, Ալագյա՛զ,
Սրտումս արև էլ չի ծաղկում,
Սիրտս է՛լ դուման, Ալագյա՛զ:

Ջառ փեծերըդ անցա, տեսա,
Առանց դարդի սիրտ չըկար,
Ա՛խ, իմանաս, ջա՛ն Ալագյազ,
Իմ դարդիս պես դարդ չկար…

-Է՞յ Մանթաշի նըխշուն հավքե՛ր,
Իմ դարդըս որ՝ ձերն եղներ,
Ձեր էդ զառ – վառ, խաս – փետուրներ
Կսևնային, քանց գիշեր:

- Է՞յ Մանթաշի մարմանդ հովե՞ր,
Իմ դարդըս որ՝ ձերն եղներ,
Ձեր ծաղկանուշ բուրմունքն անուշ
Թույն ու տոթի կփոխվեր:

-Հե՞յ վա՞խ… կոտրան իմ թևերս,
Ընկա գիրկըդ, Ալագյա՛զ.
Ա՞խ, մեծ սըրտիդ սեղմեմ սիրտս,
Լամ, արուն լամ, Ալագյա՛զ…

1898

Օդեսա